

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի
Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ



ՆՈՐ ՇՐՋԱՆ — ԹԻԻ Գ

ՅՈՒՆԻՍ 1900

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

1. Խոբագրական. —	52
Ասուածաշունչ Ս. Գրոց Տպագրութիւն	65
2. Աւանդութիւն Հայաստանեայց Եկեղեցոյ. —	
Եղեւիոյ Եկեղեցին զկնի Աբգարու .	72
3. Բանասիրական. —	
Հագարեան Ճեւարանի Գրչագիր Աւեսարան .	79
4. Քարոզ. — Բարկութիւն .	85
5. Կրօնական Դասխարակութիւն .	91
6. Խրատական Ծարկոսի Աւելիոսի .	94

Հանդիսիս բաժանորդագիրնն է ամեն
սեղի համար տարեկան 4 Շիլինգ կամ 5 Ֆրանկ,
վեցամսեայ 2 Շիլինգ կամ 2½ Ֆրանկ քղթասարու:

Խմբագրութեան կամ բաժանորդագրութեան
վերաբերեալ որ եւ իցէ գրութիւն պէտք է ուղղել
առ Խմբագրութիւն Հանդիսիս, հետեւեալ հասցէի .

ARMENIAN RECTORY,

Upper Brook Street,

MANCHESTER.

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

Ա Մ Ս Ա Ք Ե Ր Ք

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն Ե Լ Ա Ս Տ ՈՒ Ա Ծ Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Տ Ե Ա Ռ Ն Տ Ե Ա Ռ Ն Մ Կ Բ Տ Ջ Ի

Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց

Թ Ի Ի Յ

Ն Ո Ր Շ Ր Ջ Ա Ն

Յ ՈՒՆԻՍ 1900

Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ա Ս Տ ՈՒ Ա Ծ Ա Ե Ռ Ն Է Ս Գ Ր Ո Յ Տ Ո Ւ Գ Ր ՈՒ Ք Ի Ռ Ն

Ազգիս լեհափառ Հայրապետ աարևոյս սկիզբն հրատարակեալ առանձին կոնդակաւ՝ կրճանուցանէ թէ Աստուածաշունչ Ս. Գիրքն պիտի տպագրուի՝ ի մօտոյ Մայր Աթոռոյ Տպարանում Ս. Էջմիածնի մատենադարանին մէջ պահուած մէկ ընտիր ձեռագրի վերայ. եւ համայն Ազգին կըզիմէ որ փութան յօգնութիւն՝ նիւթական պէտքերն հոգալու այդ կարեւոր ձեռնակութիւն՝ ի գլուխ հանելու համար: Արարտաս ամսագիրն եւս հետաքրքիր տեղեկութիւններ կըհաղորդէ առաջիկայ տպագրութեան պարագայից նկատմամբ, յորոցմէ կըքաղենք հետեւեալն. —

«Արդէն պատրաստութիւններ են տեսնուում ներկայ 1900 թուականին սկսելու տպագրութիւնը: Տպագրուել եւ բաժանուել են թեմական եւ հոգեւոր աստաններին եւ նրանց ստորադրեալ գործակալներին անգործազրկելու բաժանորդագրութեան համար Ս. Աթոռի տպարանի կնքով գրօջմած, ժապաւինած եւ տպարանի տեսչի ստորագրութեամբ վաւերացած:

Ս. Գիրքը ճաշակով եւ մաքուր տպագրելու համար պէտք է հրաւիրուի Եւրոպայից տպարանական գործերին մասնագէտ հմուտ տպագրիչ :

Տպագրուելի Ս. Գիրքը լինելու է պատկերազարդ եւ պատկերները առանձին յանձնարարութեամբ պէտք է պատրաստուին Գերմանիայում :

Ս. Վեհի բարեհաճ անօրէնութեամբ բաժանորդագիրը նշանակուած է 5 ռ. որով տպագրութեան եւ թղթի անհրաժեշտ ծախքերը գծուար թէ կարելի լինի ծածկել : Սակայն Ս. Հայրապետը աչքի առաջ ունի Ս. Գրքի տարածման բարոյական օգուտը, որի մէջ իւր միակ միւլթարութիւնն է տեսնում. իսկ բաժանորդագրութիւնը միայն թեթեւ նպաստ պէտք է լինի շքեղ տպագրութեան մեծ ծախսերի համար :

Պարտաւորութիւն է դրվում Ռուսահայոց բոլոր եկեղեցիներին եւ հոգեւոր պաշտօնականների վրայ մի մի օրինակի բաժանորդ գրուելու : Բարոյական պարտք է դրվում նաեւ կարող ազգայնոց վերայ իրենց կարողութեան չափով Ս. Գրքի մի քանի օրինակների բաժանորդ գրուելու, որոնց կողմից ձրիապէս կըբաժանուին աղքատ եկեղեցիներին եւ չքաւոր հոգեւոր պաշտօնականներին :

Յարգանք խնդրվում է նաեւ բոլոր թեմ. եւ հոգ. առաջնորդներին, բարձրապատիւ փոխանորդներին եւ արք. գործակալներին փութալ բաժանորդներ գտնելու գործը առաջ տանել : Յատկապէս խնդրուած է նիւթական հարստութեամբ ճոխացած ազգայիններին փութալ իրենց նիւթական օժանդակութեամբ նպաստել այս Աստուածահաճոյ մեծ գործին » :

Տակաւին ոչ հայրապետական կոնդակի պաշտօնական օրինակն եւ ոչ վերոյիշեալ զեկուցումն պաշտօնապէս Անգղիա հասած է. բայց երբ հասնին, վստահ եմք որ անգղիաբնակ մերազնեայք ոչ մէկ հայ գաղթականութենէ վար չեն մնար մեր Հայրապետի այս սրտառուչ եւ այնքան գովելի կոչման՝ իւրեանց կարողութեան չափ արժանապէս պատասխանել :

Գժբախտ պարագայք եւ ազգային եւ եկեղեցական ուրիշ անհրաժեշտ պէտքեր մինչ ցարդ արգելք եղած էին մեր Մայր Աթոռոյ տպարանէն Ս. Գրոց հրատարակուելուն : Այն խաղաղութիւնն ու մտային անդորրութիւնն

զոր, օրինակի համար, Վենեսալոյ Միլիթարեանք կարող եղած են Ս. Ղազարու կղզոյն վերայ վայելել, եւ այնքան հմտութեամբ 'ի գործ ածել յօղուտ եւ 'ի պայծառութիւն ազգային գրականութեան, զժբախտաբար ոչ Ս. Էջմիածնի Միաբանութեան եւ ոչ մեր միւս Առաքելական Աթոռոյն (Մրուսաղէմի) բաժին հասած է: Եկեղեցւոյ եւ ազգի վարչական ծանր պարտաւորութիւններ բացարձակապէս անհնարին կացուցած են այն գրական գործունէութիւն որ բազում կաթուղիկոսաց եւ պատրիարքաց ամենասիրելի բաղձանքն եղած է: Այն բուն ջանքեր զոր երկոքին Առաքելական աթոռք Հայոց ժամանակ առ ժամանակ 'ի գործ գրած են տպարաններ հաստատելով եւ գրքեր հրատարակելով՝ ուսմանց եւ կրօնից սէրն արծարծել հայ ժողովրդեան մէջ՝ փայլուն ապացոյցներ են մեր հայրապետաց բարեյօժարութեան, որ սակայն միշտ բարեբախտութեամբ եւ յաջողութեամբ զուգուած չէր: Չմոռանամք որ առաջին տպագրութիւնն հայկական Աստուածաշունչ Գրոց Յակոբ կաթուղիկոսի քաջալերութեամբ եւ Ս. Էջմիածնի միաբան Ոսկան վարդապետի ձեռք եղած է յամի 1666:

Իսկ մեր այժմեան վեհափառ Հայրապետի ձեռնարկութիւն այնքան առաւել գովելի կըհանգիստանայ, երբ չնայելով այն բազմադիմի զժուարութիւններ ու վիշտեր զորս իւր կաթուղիկոսութեան օրէն մինչեւ ցարդ կրած է իբրեւ գլուխ Ազգի, չնայելով այն աղիողորմ աղաղակներ որ ամեն օր կ'ուզուին Ն.Վ. Օծութեան՝ հազարաւոր մարմաւոր եւ հոգեւոր պիտոյից համար, եւ չնայելով այն արկածալից եւ դառն ժամանակին յորում կոչուած է 'ի կաթուղիկոսութիւն, որ թերեւս Շահաբասի թշուառ ժամանակէն նուազ թշուառ չէ, — այսու ամենայնիւ Ազգիս ալիզարդ Հայրապետն չէ մուցած իւր հօտի հոգեւոր պէտքերն, եւ մարմաւոր «հացի սեղանի» հետ կ'ուզէ նաեւ կենաց հացի սեղան սփռել իւր զաւակաց առջեւ, Աստուածաշունչ Ս. Գիրքը տպագրել տալով Մայր Աթոռոյ տպարանում այնպիսի գիւրամասչելի պայմաններով որ մինչ ցարդ եղած չէ: Հինգ ուսուցչոյ համեմատաբար չնչին գումարի փոխարէն ամեն հայ ընտանիք պիտի կարենայ ունենալ մի փառաւոր Աստուածաշունչ, եւրոպացի հմուտ արուեստագէտի հսկողութեամբ տպագրեալ ընտիր թղթի վերայ, բազմաթիւ պատկերներով զարդարեալ, եւ թերեւս փառակազմ եւ ոսկեզօծեալ:

Ով որ Վեհափառ Հայրապետն 'ի մօտոյ կրճանաչէ, ով որ Նորին Սրբութեան գրուածներ ուշի ուշով կարգացած եւ ուսումնասիրած է, կարող է վկայել որ Հայոց Հայրիկն անձնապէս Ս. Գրոց կրպարտի այն բոլոր ազնիւ եւ աստուածամերձ զգացումներն եւ յատկութիւններն, որով նախ քան զկաթուղիկոսութիւնն արժանացած էր այդ փառաւոր տիտղոսին: Ուստի զարմանալի չէ որ իւր ծերութեան ժամանակ կ'ուզէ կտակել իւր մանկանց այն գաղտնիքն որով ինքն այնքան բարձր է, ոչ թէ միայն պաշտօնով, այլ նաեւ բոլոր մտային ու հոգեւոր բարի յատկութեամբ, Ս. Գիրքն Հայաստանեայց Եկեղեցոյ հովանաւորութեան ներքոյ տպագրելով եւ իւր հայրապետական օրհնութեամբն գրոշմելով՝ հայ ժողովրդեան ձեռքը պիտի դնէ, որպէս զի ամեն ոք անկասկած ընթեռնու եւ վայելէ իւր հոգւոյ փրկութեան աղբիւր եղող աստուածային մասեանն:

Հայրապետական կոնդակէն կըհասկանամք որ տպագրութիւնը պիտի կատարուի Ս. Էջմիածնի թանգարանին մէջ պահուած ամենէն ընտիր համարուած գրչագիր Աստուածաշունչի վերայ, անփոփոխ ճշգրութեամբ արտատպելով այդ մէկ օրինակն: «Մեր մտադրութիւն չէ բնաւ, կըյաւելու Վեհափառ Հայրապետ, ուսումնասիրական կերպով համեմատել օրինակներն եւ մի առ մի նշանակել նոցա տարբեր ընթեցուածներն, զի այդ շատ դժուարին է եւ միջոցներ կըպակսին: Ես լաւագոյն իւ օգտակար կըհամարիմ գէթ այժմ Աստուածաշունչ Գիրքը ժողովուրդին առ կ եւ ոչ թէ ուսումնասէր բանասէրներուն հետաքրքրութեան արժանի մի նոր տպագրութիւն ընծայել»:

Այս որոշման մէջ դարձեալ մեր Հայրապետի իմաստութիւնն յայտնի է: Ս. Գրոց քննադատութեան գործն կարի դժուարին արուեստ մի է, որ խորին հմտութեան եւ բազում հիշ եւ նոր լեզուաց գիտութեան կարօտ է, որպէս եւ նախնի սուրբ հարց մատենագրութեան ընդարձակ տեղեկութեան պէտք ունի, թող որ ամեն կարեւոր գրչագիր պէտք է քննուի, բաղդատուի, եւ որոշ կանոններով ամենէն հաւանական ընթերցուածն ընարուի: Այսքան մեծամեծ գժուարութեանց հանդէպ, ամենէն իմաստուն քայլը կ'առնէ. քննական գործի ոչ միջոցն եւ ոչ ժամանակն ունիմք. առ այժմ միայն պէտք է Ս. Էջմիածնի թանգարանի ամենէն ընտիր գրչագրի հրատարակութեամբն

չատանամք, որ եթէ հաւատարիմ ընդօրինակութեամբ եւ անխփփոխ տպագրուի, ինչպէս կըխոստանայ Վեհափառ Հայրապետն, ըստ ինքեան ուսումնական մի կարեւոր նշանակութիւն կ'ունենայ, եւ նման վերջերս 'ի Մոսկուա հրատարակեալ իններորդ գարու գրչագիր Աւետարանին, մի հին գրչագիր Աստուածաշունչ, — թերեւս ապագային քննադատութեան համար մեծ կարեւորութիւն ունեցող ֆոնէս, — բանասիրաց առջեւ կըդրուի յուսումնասիրութիւն եւ 'ի բաղդատութիւն: Յայնժամ գուցէ, նոյն իսկ 'ի կենդանութեան Հայրապետին, կատարուի իւր սրտի բաղձանքն, այն որ կ'ուզէ կտակել իւր յաջորդաց, եւ Մայր Աթոռոյ տպարանէն ելած Ս. Գրոց երկրորդ տպագրութիւնն պարունակէ քննական եւ ուսումնական այդ բոլոր յատկութիւններ, որոց ամփոփումն ներկայ ձեռնարկեալ տպագրութեան մէջ դժուարին եւ միջոցներու պակասութեան պատճառաւ՝ անկարելի կըհամարուի:

Ինչքան որ 'ի Ս. Էջմիածին տպագրելի Աստուածաշունչն անկախ պարագայից ներքոյ կըսկսի, եւ դէթ գրական կամ խմբագրական դժուարութեանց չի կարող պատահիլ, քանի որ գործն պարզապէս արդէն պատրաստի մէկ գրչագրի ընդօրինակելուն մէջ կըկայանայ, դարձեալ հայկական Աստուածաշունչ Գրոց որ եւ է մի նոր տպագրութիւն շի կրնար պատշաճապէս իւր նախորդները զանց առնել: Մանաւանդ Վենետկոյ Մխիթարեան Մխարանութեան բազմադիւն աշխատութիւնք, որպէս հայ մատենագրութեան այլ ճիւղերու մէջ, նոյնպէս եւ յայսմ, մեծ կարեւորութիւն ունին: Օրինակի համար Զօհրապեան տպագրութիւնն (յ. 1805), որ թէպէտեւ Ս. Գրոց արդի քննական գիտութեանց պահանջներէն կարի զուրկ է, մեծ գրական պատմական արժէք ունի, եւ Ոսկանեան որպէս եւ Մխիթարեան նախկին տպագրութեանց սոսկալի սխալներն ուղղելու ամենազօր գործիքն եղած է: Հ. Արսէն Բագրատունւոյ սրբապետեալ տպագրութիւն (յ. 1860) աւելի լեզուաբանական քան թէ գրական արժէք ունի, այլ եւ այնու կարեւոր է եւ յաջորդ տպագրութիւններ կատարելագործելու կըծառայէ: Նոյն իսկ վերջերս 'ի Կ. Պօլիս տպագրեալ Պաղտատւեան Աստուածաշունչն իւր օգտակար դասերն ունի յաջորդ տպագրողաց համար:

Ս. Էջմիածնի առաջիկայ տպագրութեան համար ընտրեալ գրչագրի հանդամանքն մեզ ծանօթ չէ. բայց տարակոչս

չկայ որ իբրև մի հին գրչագիր՝ ներկայ ժամանակի հայալեզու ընթերցողաց պարագայից յարմարելու փոքր 'ի շատէ պէտք պիտի ունենայ: Օրինակի համար տնաստութեան եւ գլխակարգութեան բաժանումներ զգուշութեամբ կատարելու է, որպէս զի համայն քրիստոնէից մէջ ընդունուած բաժանումներէն չտարբերին, — որքան որ այդ բաժանումներէն շատեր անտեղի եւ անյարմար են, — բայց եւ միանգամայն ըստ օրինակի Վենետիոյ տպագրութեանց, պահպանելու է հին հայկական բաժանումներ, որ աւելի բանաւոր եւ պատշաճ են քան զնորն: Նաեւ 'ի դիւրութիւն մանկանց Եկեղեցւոյս մերոյ, սրբազան պաշտամանց միջոցին կարգացուելի մասերն համառօտ եւ պարզ նշաններով որոշելու է ամբողջ Հին եւ Նոր Կտակարանի համար, ինչ որ մեր հին գրչագիրներէն շատեր որպէս եւ Վենետիոյ վերոյիշեալ երկու տպագրութիւնք արած են միմիայն Նոր Կտակարանի համար:

Աւելի կարեւոր են այն փոփոխութիւններ որ մեր (գրաբառ) լեզուի զարգացման հետեւանօք անհրաժեշտ դարձած են, եւ Հ. Արսէն Բագրատունւոյ պէս բանիբուն հայկաբանից կողմէ ջերմապէս ջատագովուած են, այլ գրագիտութենէ բոլորովին տարբեր պատճառներով մինչ ցարզ ընդհանուր ընդունելութիւն գտած չեն: Մեր նպատակէն դուրս է Ղ, ի եւ Լ ի ձայնից վերայ ճառել կամ նոցա վաղեմի գործածութեան բազմակնճիւռն խնդրոց մէջ մտնել: Բայց քաջ գիտեմք որ Ս. Գրոց բնագրին մէջ Գազարա, Գալասդ, Բեսաղոն, Բարսեղոս, Աղուղ, Ասկաղոն, Բերթեհեւ, Չաբուղոն, եւ այլ այսպիսի՝ լիւնով գրուած հարիւրաւոր յատուկ անուններ կան: Սակայն մեր ներկայ արասանութեամբ կարգացուած Գաղղաղա, Գաղասդ, Բեսաղոն, Բարսեղոս, Աղուղ, Ասկաղոն, Բերթեհեւ, Չաբուղոն, նոյնքան օտար են յոյն եւ երբայական բնագրաց որքան անախորժ՝ նոյն իսկ հայկական լսելեաց. եւ եթէ մեր երանաշնորհ Թարգմանիչք Ս. Գրոց յարութիւն առնէին, պժգանք ու զլուանք պիտի զգային, երբ լսէին որ այն յունական եւ երբայական փափուկ ձայներ զոր իւրեանք քաղցրալուր Լ տառով գրած էին եւ Լ հնչած էին, մեք կոչտ ու կոկորդային Ղ, ով կըգրեմք ու կըկարդամք: Արդեօք ներելի՞ է մեզ յուսալ որ մեր լուսամիտ եւ աղատամիտ Հայրապետն այս անպատեհութիւն ուղղէ ներկայ առթիւ, եւ հրամայէ որ նոր տպագրելի Աստուածաշնչի

բոլոր յատուկ անուանց մէջ գործ ածուած Ղ գիրերն առանց բացառութեան և ի փոխուին, որպէս զի յետ այնու կարենամք հնչել այդ անուններ ինչպէս Ս. Մեսրոպ եւ Ս. Սահակ եւ թարգմանչաց օրհնեալ խումբն հնչեցին:

Գարձեալ Ս. Թարգմանչաց ժամանակ Օ ձայնը կընչանակէին առ, եւ ոյ գիրերով. առհնուրիւն, Սիռլն կզգըրէին, եւ կըկարգային օրհնուրիւն, Սիօն: Բայց երբ հեռզհետէ հայք ֆրանգ աղգաց հետ յարաբերութիւններ ունեցան, եւ օտարազգի բառեր հայկական գիրերով գրելու ստիպուեցան, ֆրանգաց Օ գիրն եւս փոխ առին, ոչ թէ միայն օտար բառեր, այլ նաեւ հայերէն՝ Օ ձայն ունեցող հասարակ անուններ, գրելու համար: Այսպէս մտաւ Աստուածաշունչ Մատենին մէջ Օ գրի գործածութիւնն: Բայց դժբախտաբար ամեն Օ ձայն ունեցող առ ի եւ ոյ ի փոխարէն չգրին, այլ մէկ տեղ գրին, ուրիշ տեղ թողին. եւ այս անկանոնութիւնն տարբեր ձայներ յառաջ բերաւ, ուր ՚ի հնունն միայն Օ ձայնը լսելի էր: Հասարակ անուանց եւ այլ մասանց բանի վերայ խօսք չունիմք: Բայց կարեւոր կըհամարիմք որ, քանի որ այժմ Օ գիրն ունիմք, բոլոր Օ ձայն ունեցող յատուկ անուններ Օով գրուին. օրինակի համար, Սիօն, ոչ Սիռլն. Բաւօր, ոչ Բաւնոյթ. Գաւօր, ոչ Գաւնոյլ, եւ այլն: Ըստ այսմ կըբաւէ որ վեհ. Հայրապետն հրամայէ՝ տպագրելի համայն Աստուածաշունչ Գրոց մէջ բոլոր յատուկ անուանց ոյ ը Օ ի փոխել, որով թէ յոյն եւ երբայցիք բնագրաց կըմօտենամք եւ թէ մեր սրբազան թարգմանչաց իսկական նպատակին:

Օ գրի գործածութիւնն մի քանի հարիւր տարիներէ ՚ի վեր հասարակ անուանց եւ ուրիշ մասանց բանի մէջ ընդունուած է. սակայն ոմանք չգիտեմք ինչ պատճառաւ տակաւին կըշարունակեն գրել մեօֆ, ձեօֆ, աղեօֆ, փոխանակ մեօֆ, ձեօֆ, եօթն, աղեօֆ, ինչպէս կըհնչէին ՚ի հնունն եւ կըհնչեմք մեք. կամ եղ, երկեղ, աղբեր, մեռ, փոխանակ հնչման գիրերով՝ իղ, երկիղ, աղբիւր, միւս, եւ այլն գրելու(*): Հաւանական է որ Ս. Էջմիածնի ձեռագր

(*) Զարմանալի է որ Ս. Գրոց Ընկերութեան՝ ՚ի Կ. Պօլիս տպագրեալ Աստուածաշունչն այս հնացեալ ձեւերը շուրջաբար գործ կ'ածէ: Ո՞չ ապաքէն աւելի մեծ ճառագումբին մատուցած կըլինէր այդ Ընկերութիւն, երբ փոխանակ Մակարայեցոց եւ ուրիշ երկրորդականոն կոչուած գիրքերը դուրս Թողնելու, այդ հնացեալ եւ շփոթիչ ձեւերը փոխել, և եւ Օ գործ ածէր ուր որ այդ ձայներ կըպահանջուէին յատուկ անուանց մէջ, եւ մի քանի ուրիշ այսպիսի օգտակար

գիրն այս հին ձեւերն ունենայ. բայց քանի որ հայ ժողովրդեան գործածութեան համար կըտպագրուի նոր Աստուածաշունչն, անտեղի չէ յուսալ որ Սրբազան Հայրապետն հրամայէ տպագրչաց՝ զգուշանալ այսպիսի հնացեալ ձեւերէ եւ տպագրել ճիշդ ինչպէս որ պիտի կարգացուի:

ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏ. ԵԿԵՂԵՅԻՈՅ

ԵԴԵՍԻՈՅ ԵԿԵՂԵՅԻՆ ԶԿՆԻ ԱԲԳԱՐՈՒ

1. Հայր Ալիբան, — Արեալոյս Քրիստոնէութեան Հայոց .

Գեղեցիկ, այլ յաւէտ բարեբախտ, զուգադիպութեամբ իմն կրօնաթերթիս Մայիսի թիւն արդէն տպագրութեան յանձնուած էր երբ Վենետիոյ Բագնալիկայ ամսաթերթի Մայիսի թիւն կանխելով հասաւ Խմբագրութեանս, որ 'ի միջի այլ բազում շահաւէտ գրուածոց՝ Գեր. Հ. Ղ. Վ. Մ. Ալիշանի ստորագրութեամբ թերթիս այս մասին հետ ամենասերտ առնչութիւն ունեցող մի բանասիրական յօդուած կըպարունակէր որ շարայարելի է: Գեղեցիկ եւ բարեբախտ զուգադիպութիւն կոչեցի զայս պարագայ, վասն զի այս սողերը գրող նորընծայի համար ուրիշ ի՞նչ բան կարէ բախտաւոր համարուիլ քան թէ Հայաստանեայց Եկեղեցւոյ պատմութեան առապար եւ զժուարագիւտ ճանապարհաց մէջ զմեծանուն Վարդապետն Ալիշան ունել իբրեւ ուղեկից կամ լաւ եւս՝ իբրեւ առաջնորդ: Արդարեւ կըվայելէր ինձ լուծեամբ սպասել եւ նախ ընթեռնուել եւ ուսումնասիրել Հ. Ալիշանի որպէս արդէն գրուած նոյնպէս եւ յետայսու գրելիք բոլոր յօդուածներն 'ի վերայ Արշալուսոյ Քրիստոնէութեան Հայոց. բայց կրօնաթերթիս առաջին թիւէն իսկ սկսած լինելով մեր Եկեղեցւոյ հնագոյն աւանդութիւնները պատմել, երբ տակաւին Հ. Ալիշանի Արշալոյսն երեւցած չէր, այլ եւս

բարեփոխեամբ ըստ մտաց Սրբոց Թարգմանչաց՝ աւելի շահաւէտ կացուցանէր մեր նախնեաց Թարգմանութեան ընթերցումն:

կանգ առնելն անպատեհ կրթուի: Միայն թէ՛ խորին յարգանօք եւ երկիւղածութեամբ պիտի ժամանակ առ ժամանակ ՚ի վեր նայիմ քովէս ճամբորդող հսկային, որ ամայ եւ դարուց լերանց եւ բլրոց մէջէն խայտալով եւ ոստոսալով կ'անցնի կրվազէ իբրեւ զգառնուկն ՚ի վերայ մարդաբեանի, եւ կարծես թէ այսքան բազմաճիւղ ճանապարհաց քարերն ու ծառերն մինչեւ իսկ թուած եւ դասաւորած է: Սոյն յօդուածոց կարգը շարունակելուս մէկ ուրիշ պատճառն եւս այն է որ արդէն մի քանի տարիներէ հետէ մեր Եկեղեցւոյ նախկին պատմութիւն իմ առանձին ուսումնասիրութեան առարկայ չիւնած եմ, եւ յամի 1897 յ0 քոֆըրդ համալսարանական քաղաքի հրատարակուող մի անգլիական ամսաթերթի մէջ վեց երկար յօդուածներով սոյն առարկայի վերայ սոյն մտօք եւ ուղղութեամբ խօսած եմ, եւ հետեւաբար ճանապարհս արդէն փոքր ՚ի շատէ նախագծած եմ:

2. Եկեղեցւոյ աւանդութեան գերակիւռ վկայութիւն:

Մեր Եկեղեցւոյ նախկին պատմութիւն ստուգելու աւանդակարեւոր առաջնորդը կը համարիմ մեր Եկեղեցւոյ աւանդութիւնն: Երկրորդական եւ աննշան իրաց մէջ կարելի է սխալ աւանդութիւններ սպրդած լինին եկեղեցական եւ ազգային պատմութեան մէջ: Բայց անկարելի կը թուի որ նախնի սրբազան հարք ներած լինէին Ս. Եկեղեցւոյ մէջ որ եւ է մի բան որոյ ճշմարիտ լինելուն կատարելապէս համոզուած չլինէին: Ստոյգ աւանդութիւնն ըստ իս՝ ամենէն զօրաւոր եւ գերակշիռ վկայուած թիւնը կ'ընծայէ անցեալ ժամանակի պատմական գիպաց, մանաւանդ երբ այդ աւանդութիւն Ս. Եկեղեցւոյ մէջ երգօք, աղօթիւք, տօնակատարութեամբ եւ այլովք իւրիք կենդանի եւ խեղաթիւրուելու վտանգէն ազատ պահուած է: Այն սրբատուն հայրապետներ եւ վարդապետներ որ մեր եկեղեցական պաշտամանց եւ կարգաւորութեանց հեղինակներ եղած են ժամանակ առ ժամանակ՝ շատ աւելի մեծ եւ զօրաւոր պատճառներ ունէին ճշմարտութիւն, եւ ոչ այլ ինչ բայց զճշմարտութիւն, ստուգելու եւ աւանդելու քան թէ ներկայ ժամանակի հեղինակք, որք իւրեանց բոլոր հմտութեամբ եւ գրագիտութեամբն հանդերձ՝ անցեալ ժամանակի ղէպքեր եւ ոչ իսկ « ընդ հայելի

օրինակաւ » կարեն տեսնել եւ հասկանալ, մինչդեռ Եկեղեցւոյ հնազոյն աւանդողք իբրեւ ժամանակակիցք կամ ըստ ժամանակին կարի մերձաւորք կրտսնէին գրեթէ « դէմ յանդիման » :

Այս այսպէս լինելով, վերին աստիճանի զգուշութիւն պէտք է Եկեղեցւոյ աւանդութիւնը քննադատելու համար : Բաւական չէ որ այս ինչ կամ այն ինչ աւանդութիւն ստոյգ չի երևիր . պէտք է նախ ստոյգը գտնել, ոչ թէ հաւանական երեւցածն ճշմարտութեան եւ իրողութեան տեղ դնել, եւ ապա աւանդութիւնը քննադատել : Որքան ժամանակ ուրիշ ստոյգ եւ անկասկած վկայութիւն չկայ, աւանդութիւնն է մեր ունեցած ամենէն աւելի ստոյգ վկայութիւն :

Երբ, օրինակի համար, Եղեսիոյ նախկին պատմութեան չգոյութիւն կամ պակասութիւն, եւ Ուռհայ գաւառի աշխարհազրական դիրքն եւ այլ հանդամանք անհաւանական կրկացուցանեն Եղեսիոյ որ եւ է մի իշխանի տիրապէս « թագաւոր հայոց » լինելն, դարձեալ այդ չի նշանակեր թէ մեր ազգային եւ եկեղեցական աւանդութիւն բոլորովին մերժելու է, եւ ուրանալու է որ Եղեսիոյ հայ, յոյն եւ ասորի ցեղերէ բազկացեալ ժողովրդեան համար հայազգի եւ Արշամայ որդի Աբգարն իշխան ընտրուելով ըստ սահմանադրութեան եղեսացւոց՝ կերպիւ իւր ստացաւ այն ազգեցութիւն որով 'ի նախնեաց մերոց « թագաւոր հայոց » կոչուելու արժանցաւ 'ի շնորհս իւր ազգութեան . ըստ որում մեր եկեղեցին եւս կրկատարէ զ« Տօն նախաՎկայ եւ 'ի Քրիստոս հաւատացեալ անդրանիկ թագաւորին մերոյ սրբոյն Աբգարու », որ էր տիրապէս քաղառն եղեսացւոց, բայց ոչ երբէք կարելի է սուկապէս թագաւոր Ասորւոց համարել զնա : Աբգարու դարձն եւ Եղեսիոյ քրիստոնէութիւնն մեր Եկեղեցւոյ պատմութեան համար մեծ կարեւորութիւն ունին . վասն զի անտի սկսաւ Հայաստանեայց Եկեղեցւոյ քրիստոնէութիւն, հայազգի Աբգարու եւ եղեսիաբնակ հայոց հաւատալովն, եւ Աբգարու յանձնարարութեամբ եւ Եղեսիոյ հայոց յարաբերութեամբ ընդ բուն հայրենիս, որով Ս. Աւետարանն տարածուեցաւ 'ի Մեծն Հայս :

Կամ դարձեալ երբ Հայաստանեայց Եկեղեցւոյ աւանդութիւն իւր սրբազան պաշտամանց միջոցաւ իսկզբանէ անտի զԹարգէոս առաջին լուսաւորիչն հայոց՝ իբրեւ մին

յերկոտասանից համարած է, մինչ ցարդ 'ի հակառակորդաց յառաջ բերածներէն շատ աւելի զօրաւոր եւ գերակշիռ վկայութեան պէտք կայ հաստատելու համար թէ յեթեանառուն երկու աշակերտներէն մին էր մեր Թաղէոսն, կամ թէ « եւ ոչ անպատճառ՝ Թաղէոս նախակարգի յաւետարանիչս հայոց աշխարհի » 1 :

3. Հալածումն քրիստոնէութեան յԵՂԵՍԻԱ :

Մովսէս Խորենացի կրդրէ թէ՝ « յետ մահուանն Արգարու բաժանի թագաւորութիւնն հայոց յերկուս . քանզի Անանուն որդի նորա կապեաց թագ՝ թագաւորել յԵՂԵՍԻԱ, եւ քեռորդի նորա Սանատրուկ 'ի Հայս » : 2

Նախորդ յօդուածէն տեսանք որ Եղեսիոյ եւ Հայաստանի միութիւնն բարոյական միութիւն էր . եւ ինչպէս հայազգի Արգարէն յառաջ երկու երկիրներ իրարմէ անկախ էին, նոյնպէս եւ 'ի ժամանակս Արգարու վարչութեամբ անկախ էին 'ի միմեանց, եւ միայն Արգարու զօրաւոր ալղեցութիւնն էր որ մի տեսակ բարոյական միութիւն, — ինչ որ ներկայ դարուս մէջ գիււանագիտական ոճով՝ « հասկացողութիւն » կը կոչուի, — գոյացած էր 'ի մէջ Եղեսիոյ եւ Հայաստանի, կամ 'ի մէջ Արգարու եւ Սանատրկոյ : Հետեւաբար Խորենացւոյն յիշած բաժանումն եւս իբրեւ այդ բարոյական միութեան բաժանումն նկատելու է : Այսինքն, երբ Արգար կը մեռնի, նորա երիտասարդ որդին Անանուն այլ եւս փոյթ չի տանիր իւր հօրեղբորորդւոյն հետ համերաշխութեամբ վարուիլ . եւ ինչպէս քաղաքական տեսակէտով իւր հօրմէն տարբեր ընթացք բռնած էր, նոյնպէս եւ 'ի մասին կրօնի չհետեւեց իւր հօր օրինակին . ուրացաւ քրիստոնէութիւնն, կռակալտից տաճարներն վերստին բացաւ, եւ զհաւատացեալն ուղղակի եւ անուղղակի հալածել սկսաւ : Անանունի բռնութեան զոհ գնաց Ս. Թաղէոսի առաջին ձեռնասուռն հովիւ եւ Եղեսիոյ առաջին հայրապետն Ադդէ, որ ինչպէս տեսանք արդէն նախ քան զհաւատալն 'ի Քրիստոս Եղեսիոյ արքունեաց մէջ բարձր գիրք ու պատուոյ պաշտօն ունէր . թագաւորի խոյրարարն էր : Անանուն կամ խորամանկութեամբ կամ անկեղծութեամբ լուր կը լըրկէ առ Ադդէ « զի արասցէ եւ ինքեան

1. Բազմավեպ, էջ 197.

2. Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Բ 34 :

խոյր՝ որպէս առնէր հօր իւրում» : Բնական եւ հասկանալի է Ս. Ազգէի զգուանքն եւ զժկամակութիւնն . ծանր նախատինք կընամարէր սուրբ հայրապետն թէ՛ իւր անձին եւ թէ՛ իւր սրբադան պաշտօնին, որ թագ պատրաստէր՝ դարգարելու ճակատն այն թագաւորին որ իւր երկնաւոր թագաւորն ուրացած էր . ուստի խստիւ կը պատասխանէ, թերեւս զայն յուղղութիւն բերելու յուսով . «Ո՛չ արասցեն ձեռք իմ խոյր զաղաթան, որ ոչ երկիր պագանիցէ Քրիստոսի» : Անանուն կըբարկանայ եւ անմիջապէս զինուորներ կըղրկէ եւ զայն սպանանել կըտայ : Թագաւորն ինքն եւս շատ շուտով իւր անգթութեան պատիժը կըկրէ . վասն զի իւր ապարանից նորոգութեան միջոցին, մինչդեռ Անանուն չէնքի մէջ տեղը կեցած վերն աշխատող գործաւորաց կընայէր եւ հրահանուներ կըտար, մի մեծ սիւն կըսահի կ'իշխայ նորա վերայ եւ կըսպանանէ զնա :

Մեր եկեղեցին կըտօնէ Ս. Ազգէի յիշատակն Յիսնակաց միջոցին Ս. Իգնատիոս հայրապետի հետ միասին :

4. Հեղինէ՛ սիկին Արգարու .

Մովսէս Խորենացի համառօտիւ կըպատմէ թէ զկնի մահուան Արգարու՝ Սանատրուկ կըգայ յեգեսիա եւ կըսպանանէ զամենայն որդիս Արգարու, այլ Հեղինեայ տիկնոջ հետ յարգանօք կըվարուի, եւ մեծ ճոխութեամբ եւ հարստութեամբ կ'առաքէ զնա 'ի հայրենիս իւր 'ի Խառան : Բայց Հեղինէ չհանդուրժեց բնակիլ կռապաշտից մէջ, այլ մեկնեցաւ գնաց Երուսաղէմ կղաւղիոս կայսեր ժամանակ երբ Հրէաստանի մէջ սով կար, ըստ վկայութեան Ս. Գրոց, ³ եւ իւր զրամոջն Եգիպտոսէն մեծ քանակութեամբ ցորեն գնեց եւ բաշխեց կարօտելոց : Եւսեբիոս եկեղեցական պատմիչն նոյնպէս համառօտակի պատմելով «վասն Հեղինեայ գշխոյին Ոսրոյենաց», զոր հին հայկական թարգմանութիւնն կըկոչէ «տիկին Միջագետաց», կըվկայէ թէ «սորին իսկ այսր Հեղինեայ կան չիրմօք նշանաւորք մինչեւ ցայսօր ժամանակի 'ի բուրաստանս քաղաքին որ Ելիա կոչի, զոր եւ Ադիարենաց գշխոյ ասեն լինել» ⁴ :

3. Գործք Առաքելոց, ԺԱ 28 :

4. Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Բ 35 : Եւսեբիոս, Պատմութիւն Եկեղեցւոյ, Ե 12 : Ելիա Կապիտոլինա կրկուցէր այն հովմէական

Եւսեբիոս որպէս եւ Խորենացին իւրեանց այս պատմութիւն զոր ուրիշ աղբիւրներէ առած կըթուին՝ կըհաստատեն աւելցնելով « որում եւ վկայէ Յովսէպոս » 5 : Սակայն երբ Յովսէպոսի Հնախօսութիւնք Հրէից մատեանը ձեռք կ'առնենք, կըտեսնենք որ երեք երկար գլուխներ (Ի, 2—4) նուիրուած են Հեղինեայ տիկնոջ անցքերուն : Արգարու փոխարէն Մոնոբասոս ոմն կըգտնենք իբրև իշխան Ադիարենաց փոխանակ Եդեսիոյ կամ Ուրոյինաց կամ Ուրնայի, եւ մարտոց եւ տեղեաց բոլորովին տարրեր անուաններ քան զոր գիտեմք՝ ի հայ եւ յօտարազգի քրիստոնեայ պատմագրաց : Հեղինէ որպէս եւ իւր ամուսին եւ զաւակունք ոչ թէ քրիստոնէութիւն, այլ հրէութիւն կ'ընդունին. եւ պատմութեան մնացեալ պարագայք առ երևութին բոլորովին տարրեր անձանց, իրաց եւ անցից կ'ակնարկեն քան զոր Խորենացին եւ Եւսեբիոս կ'ըմբռնեն : Բայց երբ կընկատեմք որ Յովսէպոս ազգաւ եւ կրօնիւ հրեայ էր, եւ մի այնպիսի դարու մէջ կըզգէր երբ քրիստոնէութիւնն տակաւին հրէութենէ բաժանուած չէր, ոչ եւս առաքելական դարու քրիստոնեայք—մանաւանդ Պաղեստինոյ եւ չրջակայ երկրաց մէջ գտնուող՝ ՚ի հրէութենէ պարձող քրիստոնեայք—զինքեանս բոլորովին ազատ կացուցած էին ՚ի մոլոխական օրինաց, յայնժամ հասկանալի կըլինի Յովսէպոսի ուղղութիւնն : Անուանց տարրերութիւնք եւս գիւրաւ հասկանալի են, երբ անձինք որպէս եւ տեղիք տարրեր ժամանակներ տարրեր անուաններով յիշուած կըգտնեմք : Պատմական զէպքերն եւս երեւցածին չափ տարեր չեն մեր ազգային աւանդութիւններէ : Օրինակի համար կըկարգամք Յովսէպոսի վերոյիշեալ մատենին մէջ թէ Ադիարենոյ իշխանն իւր ծերութեան ժամանակ կոչեց իւր որդին եւ վհնի իւր

զաղցակեանոցին զոր Ադրիանոս կայսր հաստատեց Երուսաղէմի աերակաց վերայ յամի 132, երբ հիւսպք փորձեցին ապստամբիլ հռովմայեցոց դէմ եւ իրեանց նախկին պետութիւնն հաստատել Երուսաղէմի մէջ : Ադրիանոս մտնուան պատժոյ պատճառով ապստամբութիւնը արգելած էր հրէից՝ բաղաքին մօտեակն իսկ, եւ օտարազգի բնակիչներ հաստատելով եւ անունը փոխելով՝ ուղեց հրէից յօյսը բոլորովին կտրել Երուսաղէմ վերականգնելու մասին : Ելիս անունն բաւական ժամանակ ընդհանուր գործածութեան մէջ մնաց, մընչեւ հետզհետէ հռովմայեցոց տկարանալովն եւ քրիստոնէից անմամբն սուր բաղաքին մէջ՝ վերստին Երուսաղէմ անունն ընդհանրացաւ :

6. Յովսէպոս փլաիոս, հրէից մտնուն պատմաբան, ծնեալ յամի Տեան 37, բազմահատոր եւ հմտալից գրքեր մտղած է հրէից ազգի պատմութեան,

հայրական սէրը ցոյց տալու, յանձնեց նմա իշխանութիւնն Կառեայ երկրին, ուր կը բուսնի առատութեամբ Անառնոն բոյսն, յորում նաեւ կը զտնուի նոյեան տապանի մնացորդն մինչեւ ցայսօր: Ո՞վ կարէ ուրանալ որ այս նկարագրութիւն ամենէն աւելի հայոց երկրին կը պատշաճի որ կերպիւ իւրք Ամամունի հայրենիքն կը համարուի՞ և ուր նոյեան տապանի աւանդութիւնն 'ի հնադոյն դարուց հետէ պահուած է:

Դարձեալ կը կարգամք որ Հեղինեայ որդին աստուածպաշտութեան նոր կրօնն ընդունելով՝ իւր առաջին վարդապետաց հրահանգով ուզեց ինքզինքն թլփատել ըստ մովսիսական օրինաց եւ ըստ սովորութեան նախկին քրիստոնէից. բայց Ալիաբենայ (Եղեսիոյ) արքունեաց մէջ ծանօթ եւ յարգուած հրեայ վաճառական մի Անախաս անուամբ (Աբգարու Անանէ սուրհանդակն) խորհուրդ կը տայ Հեղինեայ որդւոյն չթլփատիլ, վասն զի, կ'ասէ, կարես պաշտել զԱստուած առանց թլփատութեան, զի Աստուած գեր 'ի վերոյ է քան զթլփատութիւնն: Այսքան աղատամիտ անտարբերութիւն մովսիսական օրինաց մասին երբէք կարելի չէ սպասել 'ի հրէից, բայց եթէ 'ի քրիստոնէացած հրէից որք այսպիսի խնդիրներ սկսած էին յուզել արդէն 'ի կենդանութեան սրբազան առաքելոցն, եւ պատճառ առ ին առաքելական երկրորդ ժողովոյն, յորում որոշուեցաւ հեթանոսութենէ դարձող քրիստոնեայոն չթլփատել, « եւ մի նեղել զայնոսիկ որք 'ի հեթանոսացն դառնան առ Աստուած » 7:

Միւս կողմանէ Անանիային հակառակորդ Եղիազար ոմն մովսիսական օրինաց անլուծանելի լինելն կը պնդէր, եւ թլփատութիւնն անհրաժեշտ կը համարէր 'ի փրկութիւն

պատերազմաց եւ այլ հնախօսական առարկայից վերայ: Երուսղէմի պաշարման միջոցն (յ. 70) Յովսէպոս հռովմայեցոց բանակին մէջ կը գտնուէր եւ կ'աշխատէր ըստ կարի մեղմացնել իւր հայրենակցաց տառապանք՝ միջնորդելով 'ի մէջ հռովմայեցոց եւ հրէից. սակայն այս վերջինք արհիմարհանօք մերժեցին նորա մրջմտուքիւն:

5. Ալիշան, Հայբուսակ, էջ 21, յորում Աղանարտ բառի ներքոյ ժրարու հայագի Ամախացի Ամիրտովլաք նշանաւոր բժշկի մէկ գրուածէն քաղելով՝ կ'ասէ. « Համամայ ինքն ծառ մն է փոքր. եւ ծաղիկ ունի ոսկեգուն, եւ հոտն անուշ, եւ ինքն երեք ցեղ է. եւ լան այն է որ ոսկուն գունովն լինի եւ թաժա եւ չոր. . . լան 'ի Հայոց գայ եւ անուշահոտ լինի. եւ լսեցաք որ հայերն Աղվինարտ ասն »:

7. Որքան որ Առաքելական ժողովն Երևանութեան լեղին 'ի նպաստ հեթանոսութենէ դարձող քրիստոնէից լուծեց. դարձեալ Երևանութեան հետեւող հրէամիտ կուսակցութիւնն շարունակեց Եկեղեցւոյ մէջ, որով ոչ թէ միայն

հողոց . եւ այնպիսի խստութեամբ կըխօսի Հեղինեայ որդւոյն հետ (որ այդ միջոցին իւր հօր արքայական իշխանութիւնը ժառանգած էր) եւ թլփատութեան զանցառութիւն իբրեւ մի այնպիսի սոսկալի մեղք կընկրկայացնէ Իզատէսին , զի այս էր Հեղինեայ որդւոյն անունն , որ 'ի վերջոյ կըհամոզէ զնա թլփատուիլ : Երբ կընկատեմք որ Յովսէպոսի այս պատմութիւնն Գրիստոսի առաքելոց ժամանակակից դիպաց կըպատկանի , եւ ճիշդ այդ միջոցին Երուսաղէմի , Անտիօքայ եւ ուրիշ քաղաքաց մէջ ամենէն ուշագրաւ եւ տագնապալից խնդիրն այս թլփատութեան խնդիրն էր որ կըյուզուէր . (եւ Յովսէպոսի յոյն նկարագրութիւնն ճշգիւ կըհամապատասխանէ 'ի Գործս Առաքելոց յիշուած թլփատութեան վիճարանութեանց) , այլ եւս որ եւ է տարակոյս չի մնար որ Յովսէպոսի Հնախօսութեանց քսաներորդ գրոց Բ—Դ գլուխներ մի քրիստոնեայ հասարակութեան կըպատկանին , եւ նկարագրութիւնն են առաքելական դարու եկեղեցական գրութեան 'ի կողմանս Միջագետաց եւ Հայոց :

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԳՐՁԱԳԻՐ ԱԻԵՏԱՐԱՆԵՆ

Գրչագրի մասին գրուած առաջին յօդուածով աշխատեցանք հաստատել այն կանոններն որով ընդհանրապէս Ս. Գրոց ընթերցուածոց տարբերութիւնք քննելու են : Բոլորովին մէկ կողմ կըթողումք չարամիտ փոփոխութիւններ որք հերեւաիկոսաց կողմանէ կըլինէին , եւ հետեւաբար կորսուած անհետացած են ըստ մեծի մասին , վասն զի Ս. Եկեղեցին , որ Ս. Գրոց հաւատարիմ աւանդապահն եղած է , ամենայն զգուշութեամբ այդպիսի խեղաթիւրումներ մերժած արաւարտած է . նոյնպէս մէկ կողմ կըթողումք վրիպակներ որք ընդօրինակողաց անուշադրութենէն կամ

հրէական քրիստոնեայք կըթլփատէին իւրեանց մանուկներ , այլ նաեւ հեցունտեՅնէ դարձողներն ոչ սակաւք հետեւեցան այդ սովորութեան : Մինչեւ ցայսօր Երովմոյ քրիստոնեայք (Հապէշք) սլփատութիւնը կըկատարեն , որպէս եւ ուրիշ մովսիսական օրէնքներ , կիրակիին գատ նաեւ Շարաք օրը իբրեւ օր հանգստեան , կըպահեն :

տգիտութենէն մտած են ինչ ինչ ձեռագրաց մէջ եւ յետոյ կամ սրբագրուած են կամ սխալ մնացած են: Կը մնան ուրեմն այն տարբերութիւնք որ Ս. Գրոց մէջ մտած են դիտամամբ եւ որոշ նպատակաւ, Ս. Գրոց ընթերցումն եւ ըմբռնումն աւելի դիւրին կացուցանելու մտօք: Այս բարենպատակ փոփոխութիւնք կը կատարուէին. —

Նախ՝ ընդօրինակութեան ժամանակ գործ ածուած լեզուի հանգամանքն՝ ՚ի նկատի ունելով: Չորրորդ կամ հինգերորդ դարու մէջ եղած որ եւ է թարգմանութիւն ինչ ներորդ դարու մէջ դիւրըմբռնելի լինելու համար՝ չորս հինգ հարիւր տարուայ լեզուի զարգացման զրոշմն պիտի ընդունէր. գրչութեան ձեւը փոխուած էր, ուղղագրութիւնը փոխուած էր, տեղ տեղ այլ եւ այլ ոճեր ժողովրդը դական լեզուաւ բոլորովին տարբեր մեկնութիւն ստացած էին քան զոր Ս. Գրոց առաջին թարգմանիչք տուած էին այդ ոճից: Հետեւաբար իններորդ դարու հմուտ սըրբագրող մի կարէր այն բարի նպատակն ունենալ՝ Ս. Գրոց ուսումն դիւրացնել մի քանի զգուշաւոր փոփոխութեամբք ուղղագրութեան, ոճից եւ զարձուածոց:

Երկրորդ՝ մէկ դժուարիմաց բառի տեղ, որ յընթացս դարուց իւր նախկին պարզութիւնը կորուսած էր կամ մի բոլորովին տարբեր նշանակութիւն ստացած էր, մի աւելի դիւրըմբռնելի բառ կը դնէին սրբազան հեղինակի միտքը պարզելու եւ մեկնելու համար:

Երրորդ՝ բառից այսպիսի փոփոխութիւններ կը կատարուէին մասնաւորապէս երբ խնդրոյ ներքոյ եղող բառն կամ ոճն ՚ի հերետիկոսաց սխալ՝ եւ սրբազան հեղինակի մտաց հակառակ մեկնութիւն ստանալու վտանգի ենթակայ լինէր:

Չորրորդ՝ մէկ աւետարանչի խօսքեր միւս երեք աւետարանչաց հակառակ չերեւցնելու համար ոչ սակաւ անգամ կարեւոր կէտերի մէջ մէկը միւսի բառերովը կը համաձայնեցնէին որպէս զի տկարամիտ անձինք եւ տգէտք չգայթակղէին՝ չորից աւետարանաց մէջ հակասութիւն եւ անհամաձայնութիւն տեսնել կարծելով:

Հինգերորդ՝ Ս. Գրոց հրապարակային ընթերցման ժամանակ յեկեղեցւոյ կամ յաւարտ նորին այլ եւ այլ փառաբանական խօսքեր կ'արտասանուէին ՚ի հնումն որպէս եւ մինչ ցարդ, օրինակի համար, երբ ՚ի լուր աւետեաց յարութեան Տեառն կամ հրաշից կամ այլ ինն կարեւոր

բանից, ժողովուրդը կըզոչէ «Օրհնեալ է Աստուած», եւ զկնի ընթերցման Ս. Աւետարանի կ'երգեն «Փառք քեզ Տէր Աստուած մեր», եւ զկնի երգեցման աւելունական աղօթիցն 'ի Ս. Պատարագի, քանանայն կըյաւելու «Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. Ամէն»: Այս փառարանական յաւելուածներ հետզհետէ անգիտակցաբար մտած են Ս. Գրոց մէջ եւ 'ի վերջոյ իբրեւ Ս. Գրոց մէկ մասն կազմող եւ 'ի սրբազան աւետարանչաց գրեալ խօսքեր նկատուած են:

Հիմա մի քանի օրինակներով ցոյց տամ կազարեան գրչագիր սրբազրութեանց ուղղութիւնն եւ նոցա հաւանական նպատակն, որ ընդհանրապէս նախընթաց հինգ կանոնաց միոյն կամ միւսին ենթակայ լինելու է:

1. Մատթ. Թ 3. բոլոր սպագիր ավետարանք ունին «Ասեն ընդ միտս. հայնոյե դա»: Մեր գրչագիրն «հայնոյե» բառն շատ խիստ կըզանէ Քրիստոսի նկատմամբ. ուստի կըբերէ միւս երկց աւետարանաց համաձայնութեամբ եւ Քրիստոսի մտաց յարմար ոճով կըմեղմացնէ եւ կ'ասէ «Ո՞վ է սա որ եւ զմեզս թողու»:

2. Մատթ. ԻԱ 38. — «Եւ կալցուք զժառանգութիւնն», որ յունականին համաձայն է, կըփոխէ «Եւ մեր լիցի ժառանգութիւն նորա». վասն զի մշակները ժառանգութիւնն արդէն բռնած էին. եւ միայն կըմնար որ զժառանգն սպանանելով՝ բոլորովին սեփականէին («մեր լիցի») զժառանգութիւնն:

3. Մատթ. Թ 16. — «Աւնու ելանէ զյրուքիւն նորա 'ի հանգերձէն»: Այստեղ մեր գրչագիրն զյրուքիւն բառի փոխարէն «զսերտքիւն» կըզնէ, հաւանօրէն յիններորդ դարու յրուքիւն բառն անբաւական համարելով այն միտքն արտայայտելու զոր սերտութիւն բառով եւ եթ կարելի էր լիովին արտայայտել:

4. Մարկ. Դ 26. — «Արկանիցէ սերմանիս յաշարալի», մասնաւորելով եւ պարզելով սերմի ցանուելիք տեղն:

5. Մարկ. Զ 5. — «Եւ ոչ կարէր անդ եւ ոչ մի ինչ զօրութիւն առնել». կարէ դայթակղութիւն պատճառել ազէտին որ չի հասկանար ի'նչպէս ամենակարողն Յիսուս «ոչ կարէր». ուստի կըփոխէ «Եւ ոչ կարէր անդ եւ այլն»:

6. Զ 18. — «Ոչ օրէն է քեզ ունել զիին եղքօր ֆոյ». գրչագիրը կըփոխէ «ոչ օրէն է քեզ ունել զդա 'ի կնու»:

րեան» . վասն զի առաջինն կարող է նշանակել իւր եղբօր կին որ եւ է մի ուրիշ պատճառաւ պահել, կալանաւորել եւ այլն . միչդեռ Ս. Յովհաննու բուն միտքն է՝ 'ի կնոթեան պահել :

7. Ղուկ. Ա. 48. — Հայեցաւ 'ի խոնարհութիւն աղախնոյ կրփոխուի «'ի սառապանս աղախնոյ իւրոյ» . հակառակ յոյն բնագրին, վասն զի խոնարհութիւն բառն քրիստոնէական առաքինութիւն նշանակելով՝ բաւական չէր առանց բացատրութեան Ս. Մարիամու թշուառ վիճակն լիովին արտայտելու զոր միայն տուապանք բառն կարէր առնել :

8. Ղուկ. ԺԱ. 3. — «Չհաց մեր հանապազորդ տուր մեզ զոր ըստ օրեան» . որ է յոյն բնագրի համեմատ . բայց այնքան պարզ չէ որքան մեր գրչագրի դարձուածն «տուր մեզ օր ըստ օրեան» :

9. Ղուկ. ԺԶ. 21. — «Եւ ցտնկայր ընդ զորովայն իւր 'ի փշրանայն» . որոյ յոյն բնագրին՝ սնանոց կեր տալու լիբրաւերեալ մի բառ գործ կ'ածէ, 'եւ արդարեւ այնքան վայելուչ չէ որքան մեր հայկազան գրչագրի՝ «Եւ ցտնկայր յագել 'ի փշրանաց» :

10. Ղուկ. ԺԹ. 7. — «Առ առն մեղաւորի եմուտ յուճանել» . որ յունական բնագրի ճիշդ թարգմանուածութիւնն է եւ կը նշանակէ նախնապէս կոչիկների թելերը քակել (բանալ) տունը կամ սենեակը մտնելու համար, եւ ապա անդ մնալ, իջեւանել : Մեր գրչագիր այս երբայական մութ դարձուածն մէկ բառով կրփոխէ եւ կ'ասէ . «Առ առն մեղաւորի եմուտ ազանել» :

11. Ղուկ. Ի. 1. — «'Ի միում աւուրցն յայնցանե, մինչ զեռ ուսուցանէր զժողովուրդն 'ի տաճարի անդ» : Յունական բնագիրն ունի պարզապէս «'Ի միում աւուրցն» . որ կը նշանակէ յաւուր միում : Թէ «յայնցանե» բառն ի՛նչպէս մտած է մետրովպեան թարգմանութեան մէջ՝ յայտնի չէ . եւ թերեւս Բագրատունի կարենար իւր քերականութեան բիւրաւոր օրինաց միոյն ներքոյ դասաւորել այդ բառն . բայց տարակոյս չկայ որ բացառական դերանուանական անկանն նախգրիւ տրականի հետ համաձայնեցնելն զիւրին չէ . ուստի մեր գրչագիր քերականական կանոնաւորութեան մօտենալու մասք «բացառականը սեռականի կրփոխէ առարցն բառին համաձայնելով, «'Ի միում աւուրցն այնոցիկ» : Մեր գրչագրի

մէկ ուրիշ յատկութիւնն եւս այն է որ բազում ուրեք գոյականաց հետ յօդի փոխարէն գործ ածուած արս, ակնդ բառերը կըզեղչէ եւ պարզապէս դիմորոշ յօդով կըմասնաւորէ գոյականն, ինչպէս այստեղ «'ի տաճարի անդ» կըփոխէ «'ի տաճարին»:

12. Ղուկ. ԻԲ 46. — «Ձի մի մտանիցիք 'ի փորձութիւն»: Այս տեղ մեր գրչագիրն մտանիցիք բառն կըփոխէ անգանիցիք բառի, վասն զի 'ի փորձութիւն մտանելն առաւել կամ նուազ յօժարութիւն կ'ենթադրէ որ բոլորովին հետու է Աւետարանի վարդապետութիւնէն. փորձութիւնը արտաքուստ կուգայ, 'ի չարէն կըթելադրուի, եւ զմեզ հակառակ մեր կամաց եւ յօժարութեան իւր ազդեցութեան կ'ենթարկէ, զմեզ կըձգէ 'ի փորձութիւն եւ հետեւաբար «անգանիցիք» բառն ճշդիւ կ'արտայայտէ Ս. Աւետարանի ոգին առանց որ եւ է թիւրիմացութեան վտանգի:

Լազարեան գրչագիր աւետարան ունի մի կարգ յաւելումներ բառից: Ուր որ յունական ընագիրն եւ ընդ նմին մետրովպեան թարգմանութիւն մէկ խօսքի միտք անորոշ եւ թերի կ'երեւի, մեր գրչագիր մէկ կամ երկու բառ յաւելցնելով՝ խօսքը կ'աւարտէ, եւ այլ եւս ընթերցողին չի թողուր ընթերցուածէն հետեւանքներ հանելու եւ բուն իմաստն ենթադրելու: Այս տեսակէն մի քանի օրինակներ կըքաղենք, մեր գրչագրի յաւելեալ բառերն, որ մեր սովորական տպագրեալ աւետարանաց մէջ չեն գտնուիր, շղագիր կամ իթալիք գիրերով որոշելով:

13. Մատթ. Բ 9. — «Եկեալ եկաց 'ի վերայ այրին ուր էր մանուկն». Առանց այրին բառի յաւելման՝ Ս. Գրոց մեկնարանութեան եւ քերականութեան անվարժ մէկն այլ եւ այլ ենթադրութիւններ պիտի անէր թէ աստղն ինչպէս եկեալ եկաց:

14. Մատթ. Ե 20. — Նոյնպէս այստեղ. «Որբոյ մարդոյ ոչ գոյ տեղի ուր դիցէ զգլուխ իւր»:

15. Մատթ. ԺԸ 11. — «Ձի եկն որդի մարդոյ խնդրել եւ կեցուցանել»: Որ եւ է մի կորուսեալ առարկայ բնականաբար պէտք է նախ խնդրել (փնտռել) եւ ապա ինչ որ կ'ուզենք անել. Քրիստոս եկաւ զկորուսեալ մարդն նախ խնդրել, փնտռել, եւ գտնելէն վերջն՝ կեցուցանել զնա:

16. Մարկ. Բ 3. — «Բերէին սնդամալոյժ մի 'ի մահինս բարձեալ 'ի չորից»: Առանց մահինս բառի՝


անվարժ կամ ընդհանուր բժշկական դպրոցն « բարձեալ 'ի չորից » խօսքին այլանդակ մեկնութիւններ կրնար տալ, վասն զի թէպէտ եւ մահի՛ն բառը յաջորդ տանց մէջ գործածուած է, այդ չի նշանակեր թէ անպատճառ 'ի մահի՛նս բարձեալ բերէին: Ուստի այստեղ եւս կը յաւելու 'ի մահի՛նս:

17. Յովհ. Թ. 24. — « Կոչեցին զայրն՝ որ երբեմն կոյրն էր »: Այս տան միտքն աւելի պարզ եւ դիւրաւ ըմբռնելու համար մեր գրչագիրը կը յաւելու երբեմն, այն որ երբեմն կոյր էր, բայց յիշեալ պահուն այլ եւս կոյր չէր:

18. ԺԸ 38. — « Ես եւ ոչ մի ինչ պատճառս մահու գտանեմ 'ի նմա »: Արդարեւ յունական այժի՛ւս բառն զոր Ս. Մեսրոպ « պատճառ » թարգմանած է՝ կընչանակէ նաեւ յանցանք, մեղադրանք, որ նշանակութիւն թերեւս մեր պատճառ բառն եւս մասամբ իմն ունի. բայց Լազարեան գրչագիրն Պիղատոսի միտքն արտայայտելու բաւական չի գտներ՝ առանց « մահու » բառն յաւելցնելու, որ սակայն (ինչպէս գրչագրիս բոլոր միւս յաւելումներն) վարկպարարի եւ ըստ քմաց մտցուցած չէ, այլ ըստ օրինակի Գործ. ԺԳ 28. պատճառս մահու գրած է:

Վերոյիշեալ օրինակներէն կը տեսնուի թէ ի՛նչքան յանդուգն փոփոխութիւններ բառից եւ բանից (այլ ոչ մտաց եւ իմաստից) Ս. Գրոց կը ներկայացնէ մեզ Լազարեան գրչագիրն: Յօդուածիս սկիզբն տեսանք այն պէտքերը պատճառներ որով 'ի հնումն Ս. Գրոց բարեմիտ ընդօրինակողք այլ եւ այլ փոփոխութիւններ եւ բացատրութիւններ կը մտցնէին Ս. Գրոց մէջ: Սակայն այս փոփոխութիւնք միշտ այն կերպիւ չէին կատարուիլ ինչպէս կը գտնուէք մեր գրչագրի մէջ. այլ Ս. Գրոց խօսքերը ճշգրիտ առ բառ ընդօրինակելով՝ հարկ գտած համանշանակ բառն կամ մեկնութիւնն 'ի լուսանցս գրոցն կը նշանակէին: Բայց երբեմն եւս ընդօրինակողի սխալելովն՝ այդ բացատրութեան խօսքերէն մի քանիսն բնագրի մէջը կը մտնէին, եւ յաջորդ ընդօրինակողք անկասկած կը շարունակէին ընդօրինակել այդ յաւելումներ կամ փոփոխութիւններ իբրեւ բնագրի իրական մասունք: Այս եղանակաւ մտած են Ս. Գրոց ինչպէս յունական նոյնպէս եւ հայ գրչագրաց մէջ ընթերցուածոց բազմաթիւ տարբերութիւններ: Սակայն Լազարեան գրչագրի տարբերութիւններ ոչ թէ միայն իսկզբան տգիտութեամբ կամ անու-

չաղրութեամբ գրուած չէին, այլ եւ ոչ իսկ սխալմամբ լուսանցքէն բնագրի մէջ մտած են: Մեր գրչագրի ընդօրինակողն ամենայն զգուշութեամբ, կշռելով ու քննելով, այդ տարբերութիւններն իւր աւետարանի մէջ ամփոփած է կամաւ եւ որոշ նպատակաւ, իբրև մի բարեփոխեալ թարգմանութիւն:



**ՔԱՌԱՍՆՈՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ Ի ՎԵՐԱՅ
ՄԱՀԱՅՈՒ ՄԵՂԱՑ**

ԲԱՐԿՈՒԹԻՒՆՆ.

(Խօսեցեալ յազգային եկեղեցւոյ Հայոց Մանչեսթրի յերրորդում
Կիւրակի Մեծի Պահոց 1900 .)

« Բարկանայր եւ մի՛ մեղանչէք . արեգակն ՚ի վերայ բարկութեան ձերոյ
մի՛ մոցէ : » Եփ . 7 26 .

Երրորդ մահացու մեղքն է՝ Բարկութիւն :

Մահացու մեղքերն են ընդհանրապէս յԱստուծոյ մեղ պարգեւեալ կրից չարաչար, ապօրինի կամ ծայրայեղ գործածութիւնն : Այդ կիրքեր՝ քանի որ օրինաւոր սահմանի մէջ գործ կ'ածուին ՚ի փառս Աստուծոյ, ՚ի պաշտպանութիւն անձին, կամ ՚ի սէր ընկերին՝ մեղք չեն. այլ մեղք կրղառնան երբ այդ օրինաւորութեան սահմանէն կ'անցին : Երբ հպարտութեան վերայ կըխօսէի, տեսանք որ մարդ կարող է կատարելապէս խոնարհ լինիլ եւ միանգամայն իւր որպէս եւ իւր ընկերի արգար իրաւունքներն ու պատիւն պաշտպանել, որոյ զանցառութիւնն ոչ թէ միայն խոնարհութիւն չէ, այլ բացարձակապէս ծուլութիւն է, որով եւ ինքնին մի ուրիշ մահացու մեղք է : Նոյնպէս տեսանք անցեալ կիրակի որ մինչդեռ չար նախանձն կրղատապարտուի, կայ նաեւ մի բարի նախանձ, այս ինքն, այն մրցման եւ յառաջադիմութեան ոգին որով մէկը միւսի օրինակովը կըքաջալերուի : Նոյնպէս եւ մեր այս աւուր առարկայ եղող Բարկութիւնն իւր օրինաւոր եւ արգար, որպէս եւ ապօրինի եւ մեղանչական կողմն ունի :

Ինչ է արգար բարկութիւն :

Կրկարգամբ ՚ի գիրս Ելից թէ երբ Մովսէս քառասուն

օր Սինա լեռան վերայ պահօք եւ աղօթիւք տասնաբանեայ պատուիրաններն ստացաւ, որ երկու քարեղէն տախտակաց վերայ մատամբն Աստուծոյ գրուած էին, եւ իջաւ ՚ի բանալին խրայէլացւոց, տեսաւ որ այն ժողովուրդն զոր Աստուած իւր ձեռամբ հեթանոսաց մէջէն հաներ էր որպէս զի հեթանոսաց կռապաշտ սովորութեանց չըհետեւին՝ այդ սուրբ լեռան ստորոտն եւ ամենանուիրական ժամանակ, երբ արժան էր պահօք եւ աղօթիւք հակել եւ սպասել աստուածային պատգամին, մի ոսկի կուռք շիներ էին եւ հեթանոսական շուայտութեամբ եւ արբեցութեամբ կըպաշտէին ու կըտօնէին իւրեանց ողորմելի ձեռագործն : Կըկարդամք թէ երբ Մովսէս տեսաւ այս զազրելի պատկերն, « բարկացեալ սրտմտութեամբ՝ ընկէց ՚ի ձեռաց իւրոց զտախտակսն երկոսին, եւ խորտակեաց զնոսա առ ստորտով լեռինն : Եւ առեալ զորթն զոր արարին՝ այրեաց հրով, եւ խարտեաց զնա մանր, եւ ցանեաց ՚ի վերայ ջրոցն եւ արբոյց որդւոցն Իսրայէլի : »

Այս է արդար բարկութիւն :

Երբ Հրէից Չատկի տօնին Յիսուս մտաւ տաճարն, տեսաւ որ սուրբ շէնքի գաւթին մէջ առեւտուր կ'անէին հրեայք, զոհերու համար արջառ ու ոչխար ու աղանի կըվաճառէին, եւ սեղանաւորներն եւս լուծայափոխութեան շահաւէտ գործեր կըկատարէին՝ ամեն երկրէ եկող հրեայ ուխտաւորաց օտար գրամները Տաճարի մէջ միակ ընդունելի հրէական գրամի վերածելով : Այս սրբապղծութիւնը տեսնելով Տէրն մեր՝ բարկացաւ « եւ արար խարազան չուանեայ, եւ եհան զամենեսին ՚ի տաճարէն՝ զոչխարսն եւ զարջառս, եւ զպղինձս հատավաճառացն ցրուեաց, եւ զսեղանսն կործանեաց . եւ ասէ ցնոսա՝ «Տուն իմ տուն աղօթից կոչեսցի, եւ դուք արարէք զդա այրս աւաղակաց», միանգամ ընդ միշտ հաստատելով իւր հաւատացելոց համար թէ եկեղեցւոյ սրբազան շէնքն իբրեւ տուն Աստուծոյ նկատելի է, եւ միայն իբրեւ աղօթատեղի եւ սրբազան խորհուրդներն կատարելու եւ Աւետարանի քարոզութիւնը լսելու յատկացեալ վայր համարելու է զայն : Ո՛հ, երբեմն երբ եկեղեցւոյ մէջ աներկիւղ եւ անպատկառ կըվարուիմք, կը ծիծաղիմք, բարձրաձայն կըխօսիմք միմեանց հետ, քարոզի կամ Աւետարանի ընթերցման կամ սրբազան արարողութեանց ժամանակ աղմուկով եկեղեցիէն դուրս կ'ելնենք, կամ ուշ գալով այլոց ուշադրութիւնը կըխան-

գարենք, կամ երբ նոյն իսկ ժամերգութիւն չկատարուած միջոցին անպատկառ ու աղմկալից վարմունքով Աստուծոյ սուներ կ'անարգեմք, թող չըմոռանամք որ այն Յիսուան որ արար խարազան չուանեայ եւ զսրբապիղծ հրեայսն բարկութեամբ արտաքսեց Երուսաղէմի սաճարէն՝ աստ Ս. Սեղանի վերայ բազմած է եւ գիշեր ցերեկ ամեն հայ եկեղեցւոյ մէջ կըսպասէ իրական եւ զգալի ներկայութեամբ ՚ի ձեռն Ս. Հաղորդութեան, որպէս զի իւր հաւատացեալներէն հոգեւոր պաշտօն եւ երկրպագութիւն ստանայ եւ իւրաքանչիւր եկեղեցի մտնողին կ'ասէ. «Տուն իմ տուն աղօթից կոչեսցի»: Այս էր արդար բարկութիւն:

Դարձեալ երբ կըտեսնես աղքատն ու տնանկն վաշխառու ի ձեռք խաղալիկ դարձած, որ նորա վերջին ունեցածն բռնութեամբ ձեռքէն կ'առնու ՚ի փոխարէն իւր անիրաւ վաշխին, երբ կըտեսնես մանուկն ու տկարն հզօրի բռնութեան ներքոյ կըճնշուի ու կընեղուի, երբ կըտեսնես արգարն ու անմեղն՝ չարանախանձ զրպարտչաց անիրաւ սլաքներովը կըխոցոտուի, այն է ժամանակն, անդ է ասպարէզն, ուր պարտիս արդար բարկութեան սանձն արձակել եւ ըստ քո կարողութեան թափել անմեղն անիրաւի ձեռքէն:

Գրիստոնէի արդար զայրոյթն ու բարկութիւնը պէտք է շարժի ընդդէմ այն մեծ՝ մասնաւոր կամ հանրային ոճիրներու որ դժբախտաբար ամեն օր կըգործուին երկրիս վերայ, սպանութիւններ, ընդհանուր դաւադրութիւններ, անիրաւ պատերազմներ, բռնի սով, հալածանք, կոտորած, խժոճութիւններ եւ այլ այսպիսի չարիքներ:

Ապա ի՞նչ է անիրաւ բարկութիւն, որ եօթն մայայու մեղաց մին կըհամարուի: Ամենքդ եւս կըյիշէք Դանիէլի գիրքն որ Ծննդեան եւ Զատկի ճրագալոյց երեկոյեան կըկարդացուի: Նաբուգոդոնոսոր արքայ Բաբելոնի զօրացած եւ հարստացած էր, իւր ժամանակի հզօրագոյն բըռնակալն էր. Հրէաստանի տիրած էր եւ հրէաներէն շատերը գերի տարած էր եւ մնացեալներուն վերայ եւս աւուանձին իշխան կարգած էր որ իւր հրամանաւ եւ հրահանգով կըկառաւարէր: Հրէից մէջէն երեք հանձարեղ երիտասարդներ ընտրած էր, որոց անուններն էին Սեղբաք, Միսաք եւ Աբեգնազով, զորս զկնի քաղդէական գիտութեամբ եւ ուսմամբ կրթելու իւր պետութեան մէջ բարձր պաշտօնի դրած էր: Նաբուգոդոնոսորայ օրըստօրէ մեծանալն եւ հարստանալն՝ զինքն հպարտացուց. չբաւակա-

նացաւ հոյակապ շէնքեր ու պալատներ շինելով իւր փառաց ու վայելչութեան համար, ինքզինքն Աստուծոյ տեղ դնելու յանդգնութիւնն եւս ունեցաւ: Բարեւաստանի Դէկերայ գաւառին մէջ իւր արձանը կանգնել տուաւ, որ համակ ոսկիէ շինուած էր եւ վաթսուն կանգուն երկայնութիւնն էր եւ վեց կանգուն լայնութիւնն. մի ահագին արձան, որպէս զի մզոններով հեռի տեղերէ մարդիկ տեսնեն զայն եւ աստուածային պաշտօն մատուցանեն իւր պատկերին: Կուսակալներ, զօրապետներ եւ ամեն կարգի վերահսկող աստիկաններ կարգած էր, որպէս զի ժողովուրդը ստիպեն յերկրպագութիւն պատկերին, կամ անհնազանդները պատժեն: Մունետիկներ ամեն կողմ թագաւորի խորիստ հրամանները կը քարոզէին բարձրաձայն. « Ձեզ ասի աղգք եւ ազինք եւ լեզուք. յորժամ լսիցէք զձայն փողոյ, սրնգի, թմբկի եւ քնարի եւ տաւլի եւ զերգոյ միաբանութեան, եւ զամենայն աղգաց արուեստականաց, անկանիջիք եւ երկիրպագանիջիք պատկերին զոր կանգնեաց արքայ Նաբուգոդոնոսոր»: Իւր ընդարձակ պետութեան ամեն կողմերէն գունդ գունդ ժողովուրդ կը շտապէին Դէկերայ դաշան այդ ոսկի արձանի նաւակատեաց հանդէսը կը կատարէին: Աննշմարելի չմնաց որ արքայի սիրած երեք հրեայ պաշտօնակալք, Սեդրաք, Միսաք, եւ Աբեղնազով, այդ հանդիսին ներկայ չէին: Թագաւորի ներկայութեան կոչուեցան եւ 'ի նոցանէ սպանալեօք բացատրութիւն պահանջուեցաւ: Երբ այդ երեք երկիւղած հրեայ պատանիներ ամենայն հաստատամտութեամբ մերժեցին թագաւորի առաջարկն. « Ոչ ինչ է պիտոյ վասն բանիդ այդորիկ տալ քեզ պատասխանի, զի է մեր Աստուած յերկինս զոր մեքն պաշտեմք. կարող է փրկել զմեզ 'ի հնոցէ հրոյդ բորբոքելոյ, եւ 'ի ձեռաց քոց, արքայ, ապրեցուցանել զմեզ: Ապա թէ ոչ, այս ինչ յայտնի լիցի քեզ, արքայ, զի զդիս քո մեք ոչ պաշտեմք, եւ պատկերիդ ոսկւոյ զոր կանգնեցեր երկիր ոչ պագանեմք»: Այս բարեխիղճ եւ արդար պատասխանն՝ փոխանակ զթագաւորն խոհեմութեան ածելու եւ իւր ամպարիշտ յանդգնութիւնը աչքի առջև բերելու, որով կը համարձակէր Աստուծոյ փառքն ու պաշտօնն իւր անձին վերագրել, աւելի զայրացոյց. եւ ինչպէս կը զբէ մարգարէն « յայնժամ Նաբուգոդոնոսոր լի եղեւ սրտմտութեամբ եւ գոյն երեսաց նորա շրջեցաւ »: Գրեթէ գազանի պէս

կատարեցաւ եւ հրամայեց հնոցն եօթնպատիկ տաքցնեն եւ այն արդար մարդիկն կրակի մէջ ձգել տուաւ . եւ երբ աստուածային միջամտութեամբ հուրը կըմերժէր իւր ընտելիւնը գործ դնել անմեղներու վերայ, թագաւորն առաւել եւս զայրացաւ եւ հրամայեց նաւթ ու ձէթ եւ ուրիշ դիւրավառ նիւթեր ձգեն հնոցն որպէս զի առաւել եւս սաստկանայ, այլ ի զուր :

Այս էր անիրաւ բարկութիւն :

Բայց ամեն մարդ նաբուգորոնոսորայ պէս մեծ թագաւոր չէ որ իւր բարկութիւն այսպիսի սոսկալի կերպերով արտայայտէ : Նուալ մեծ ու հարուստ մարդիկ, աղքատ ու խոնարհ մարդիկ, ամենէն ստորին դասակարգի մարդիկ, որպէս եւ ամեն հասակի ու տարիքի անձինք, իւրեանց բարկութեան առիթներն ունին : Մեր գործի եւ առեւտուրի մէջ, մեր պաշտօնի կոչման եւ զբաղմանց մէջ որքա՛ն անգամ մարդիկ մեզ պատճառ կըտան բարկանալու՝ մի անքաղաքավար եւ անվայել խօսք խօսելով, ծաղրելով, բամբասելով, արհամարհելով, նախատելով, եւ մեզ առիթ կըտան զայրանալու եւ փոխարէնն աւելի կծու խօսքով պատասխանելու . եւ մեր հակառակորդն առակելու : Կամ զբամական գործողութեանց մէջ անըզգուշութեամբ կամ զազտնի խարդախութեամբ մեզ վնաս պատճառելով՝ զմեզ կըվշտացնեն ու կըբարկացնեն, որ առիթը ամենատեսակ չարիքներ կըմաղթենք նոցա, եւ խօսքով եւս պէտք եղածէն շատ աւելի եւ համեստ լսելիաց իսկ անվայել խօսքերով կ'որակեմք զնոսա, եւ ոչ սակաւ անգամ գործով եւս մեր ցասումն կըթափենք յանցաւորի գլխուն շատ աւելի սաստկութեամբ քան զարժանն : Կամ միթէ ընտանեկան յարկն այս մահացու մեղքէն ազա՞տ է : Ինչ՞քան անգամ այդ ամուսնական սրբութեան եւ խաղաղութեան տաճարն բարկութեան կատաղի աղմուկներով կըխանգարուի, երբ վայրագ այր մի իւր տկարամիտ կնոջ չնչին թերութիւնները խոշորացոյցով կըդիտէ, վէճ ու կռիւ կըմղէ, ծեծ ու արհամարհանք՝ ի գործ կըդնէ, իբր թէ պատերազմի դաշտի վերայ լինէր, կամ երբ անզգամ կին մի իւր սնոտի պահանջներով եւ անվայել ընթացքով՝ իւր ամուսնոյն համբերութիւնը սաստիկ փորձի կ'ենթարկէ, անդադար կըկուռէ ու կըվիճէ զաւակաց հետ, սպասաւորաց հետ, զբացեաց հետ : Ի՞նչքան անգամ ծնողք իւրեանց զաւակաց թերութիւններն ուղ-

զելու պատրուակաւ կըբրդին 'ի բարկութիւն եւ իւրեանց զաւակներ խրատելու համար այնպիսի միջոցներ գործ կըգնեն որք որ եւ է օգուտ չունենալէն զատ միայն վայրագութիւն եւ կատաղութիւն կոչուելու արժանի են , բոլորովին հակառակ առաքելական պատուիրանին թէ « Հա՛րք , մի զայրացուցանէք զորդիս ձեր » : Միթէ պատիկներն չե՞ն որ իւրեանց մեծերէն կըսովորին ինչ որ կըտեսնեն , եւ հետեւաբար բարկութիւնն եւս ամենէն յառաջ իւրեանց մեծերէն կըսովորին : Նոքա եւս իւրեանց ծնողաց վերայ կըբարկանան երբ առիթն ունենան . եւ իւրեանց զայրոյթ յայտնի կամ գաղտնի՝ բանիւ եւ գործով կըցուցանեն . եւ բարկութիւնը սովորելէն վերջ , մանուկներ միմեանց դէմ գործ կ'ածեն . մեծ եղբայրն պատիկին կ'անիրաւէ , պատիկն մեծին դէմ կըբարկանայ . տղան կըբարկանայ իւր խաղալիքի համար , իւր կերակուրի համար , որովհետեւ իւր ուզածը չի գտներ : Տան մէջ սորվածն դպրոց կըտանին , դպրոցէն տուն կըբերեն , եւ տակաւ առ տակաւ աշխարհքն կըլցնեն այն մահացու մեղքով որոյ սեւ ամպերն այս վայրկեանիս հարաւային Ափրիկէի վերայ տարածուած է , եւ մի քանի տարւով յառաջ այնքան թանձրութեամբ ծածկած էր մեր սրտերուն մի աւելի մօտ երկրի վերայ—որոյ մուխն եւ ծուխն տակաւին կըբարձրանայ աւերակաց եւ արհաւրաց մէջէն :

Այս մի քանի օրինակներն բաւական են բացատրելու անարդար բարկութեան ինչ լինելն : Բարկութեան , որպէս եւ մարդկային բնութեան բոլոր կիրքերը , նմանցուցած են մի առոյգ եւ ոգեւորեալ ձիոյ որ ձիավարութեան հմուտ մարդոյ ներքոյ իւր գեղեցիկ շարժուածքովն , թեթեւ սրարշաւ քայլուածքովն թէ տեսողաց հիացում կըպատճառէ եւ թէ իւր տիրոջն մեծապէս օգտակար կըհանդիսանայ : Սակայն երբ հեծնողն ձիավարութեան անսեղեակ է , եւ չգիտէ թէ ինչպէս պիտի նստի ձիոյն վերայ , կամ երբ պիտի սանձն քաշէ եւ երբ արձակէ , կամ երբ պիտի մտրակէ եւ երբ ոչ . կամ որպիսի խօսքերով կամ ձեռքի շարժումով պիտի քաջալերէ կամ յանդիմանէ 'ի հարկին , այդ մարդոյ ներքոյ այն սքանչելի ձին կըկորսնցնէ իւր գեղանի եւ պիտանի յատկութիւններն , մի կատաղի եւ ամենի կենդանի կ'երեւի , որ յաւէտ վնասակար քան թէ օգտակար է , իւր յիմար

հեծնողն դետին կըզարնէ եւ փողոցէն անցնող ճամբորդներն եւս ոտնակոխ կ'անէ: Ուրեմն երանի այն մարդոյն որ իւր բարկութեան ձիոյ սանձն հմտութեամբ կառավարել գիտէ յօգուտ իւր անձին եւ ընկերին եւ 'ի փառս Աստուծոյ: Ամէն:

ԿՐՕՆԱԿԱՆ ԴԱՍԱԻԱՆԴՈՒԹԻՒՆ

[Սոյն վերնագրի ներքոյ դրուած փոքրիկ յօդուածներն նպատակ ունին քրիստոսի վարուց վերայ մի կարգ պարզ դասերի ծրագիրներ ներկայացնել յորոցմէ կրօնուսոյցք կարեն օգտուիլ, աւելցնելով քերեւս ուրիշ ինչ որ իւրաքանչիւր պարագային յարմար երևի: Ոչ ինչ նուազ օգտակար կարեն լինել նաև քարոզչաց, որք իբրև նախապատրաստութիւն օոյն կամ սոյնպիսի ծրագրաց վերայ քերեւս յօժարին իւրեանց քարոզներ դասաւորել:]

Ս . ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ

1. Ս. Յովհաննէս՝ Տեառն մերոյ Յիսուսի Գրիստոսի կարապետն էր: Այսինքն, նա աշխարհ զրկուած էր որպէս զի Գրիստոսի ճանապարհն պատրաստէ և նորա գալուստն իմացնէ մարդոց: Մեր եկեղեցւոյ շարականն այսպէս կրիօսի նորա մասին. «Արեգականն արգարութեան ծագման արուեստկգ առաւօտեալ, նախընթաց ճանապարհի Որդւոյն Աստուծոյ տնօրէնութեան սուրբ Յովհաննէս»: Այսինքն, ինչպէս առաւօտեան աստղն (արուեստկն) մեր երկրագնաի լուսատու արեգական մօտակայ ծագելը կըծանուցանէ, նոյնպէս ևս Ս. Յովհաննէս «արգարութեան արեգական», այսինքն, Գրիստոսի, աշխարհ գալը կըկարապետէ (յառաջագոյն կ'իմացնէ). և Աստուածորդւոյն տնօրէնութեան (այսինքն, քարոզութեանց, չարչարանաց, մահուան և այլն) մերձ լինելը նախապէս կ'ազդարարէ:

2. Ս. Յովհաննէս խոստման զաւակ էր: Այսինքն նախ քան զծնունդն Աստուած խոստացաւ նորա հօրն՝ Չաքարիային, որ իբրև քահանայ երուսաղէմի տաճարին մէջ սրբազան պաշտօն կրկատարէր և սուրբ սեղանը կըխնկարկէր, թէ զաւակ պիտի ծնանի որ նշանաւոր դեր պիտի կատարէ երկնից արքայութեան մէջ: Նորա մայրն եղիստրիթ ամենօրհնեալ սուրբ կուսին ազգական էր: Յիշենք Ս. Գրոց մէջ յիշատակուած ուրիշ խոստման զաւակներ. — Իսահակ, Եննդ. Ժ. 16, Սամուէլ, Աթագ. Ա. 17. Սամսոն, Դատ. ԺԳ 3. և 'ի վեր քան զամենայն մեր փրկիչն, Ղուկ. Ա. 31: ԽՐԱՏԱԿԱՆ, (1) Աստուած է Աստուած ընութեան, և կարող է երբ և ինչպէս յարմար կըլատի՝ ընութեան օրէնքներն ըն-

դարձակել կամ կասեցնել:

(2) Աստուած կըվարուի մեզ հետ ինչպէս որ ինքն կըհաճի. մեզ կըյայտնէ միայն այն բաներ զորս կըփափաղի որ մեք գիտնանք:

(3) Աստուած իւր արարչագործութիւն դեռ աւարտած չէ. քանզի թէպէտ և բնութեան օրինօք և միջոցաւ կըկատարէ, բայց և այնպէս իւրաքանչիւր անձն Աստուծոյ անմիջական և յատուկ ձեռագործն է:

3. Ս. Յովհաննէս Մկրտչի կամ Քրիստոսի կարապետի գալուտոն 'ի վաղուց անտի գուշակուած էր: Մարգարէն Եսայի կոչած էր զնա՝ «ձայն բարբառոյ յանապատի». Ես. Խ 3. Յով. Ա 23: Մկրտչի յատկութիւնները նկատելի են:

(1) Նորա զգեստը. Ստեւ ուղտու և գօտի մաշկեղէն, Մատթ. Գ 4.

(2) Նորա կերակուրը. Մարախ և մեղր վայրենի, Մատթ. Գ 4.

(3) Նորա պաշտօնը. (ա) Բարոզել ապաշխարութիւն, Մատթ. Գ 1-2. (բ) Մկրտել ջրով, Մարկ. Ա 4.

(4) Նորա յաջողութիւն. Ելանէին առ նա ամենայն Երուսաղէմացիք, և ամենայն Հրէաստան և ամենայն կողմն Յորդանանու. Մատթ. Գ 5.

(5) Նորա անաչառութիւն և խստութիւն. Նա կըյայնդիմանէ (ա) զՓարիսեցիս, Մատթ. Գ 7. (բ) զՍադուկեցիս, Մատթ. Գ 7. (գ) զԺողովուրդն, Ղուկ. Գ 7. (դ) զՄաքսաւորս, Ղուկ. Գ 12. (ե) զԶինուորս, Ղուկ. Գ 14. (զ) զՀերովդէս, Ղուկ. Գ 19.

(6) Նորա վկայութիւնը. Խոստովան եղև իթէ Ես ոչ եմ Քրիստոսն և ոչ եղիս և ոչ մարգարէն, ալլ կարապետ Քրիստոսի: Յովհ. Ա 19-28:

4. Ս. Յովհաննէս Մկրտիչ բազում իւրք նման էր Եղիա մարգարէին. օրինակի համար.

(1) Նորա յանկարծական երևումն. Ս. Յովհաննէս յանապատին Հրէաստանի. Եղիա առաջի Աքաաբու, Գ Թագ, Ժ 1.

(2) Նորա զգեստն և կերպարանք.

(3) Նորա ճգնողական (առանձնական) կեանքն. որով երկնաքաղաքացի կոչուած է 'ի մանկանց Եկեղեցւոյ:

Քրիստոսի ժամանակ Հրէից մէջ ընդհանրապէս ընդունուած աւանդութիւն մի էր թէ «Նախ Եղիայի պարտ է դալ»՝ Մեսիայի գալէն յառաջ, ըստ կանխասացութեան մարգարէին Մաղաքեայ, Գ 5:

Իսկ Տէրն մեր Ս. Յովհաննու կ'ակնարկէ իբրև Եղիային որ գալոցն էր, Մատթ. Ժ: 10-13:

ԽՐԱՏԱԿԱՆ. (1) Ամենակարողն Աստուած կըյարուցանէ մարդիկ իւր առանձին նպատակի համար ե'րբ և ի'նչպէս կըկամի:

(2) Ոմանք կըկոչուին մեծամեծ և կարեւոր գործեր գործելու առաջի Աստուծոյ, որպէս Եղիա և Ս. Յովհաննէս Մկրտիչ:

(3) Իւրաքանչիւր ոք 'ի մէնջ կոչուած է մի առանձին գործի կամ պաշտօնի, և իւրաքանչիւր մին իւր յատկացեալ գործն ունի կատարելու առաջի Աստուծոյ, որքան որ այդ գործ չնչին կամ անկարեւոր թուի մեզ:

(4) Մեր երկրւոր կեանք այն չափովն ու կշռովը կըքնահաստուի առաջի Աստուծոյ, որով մեք մեզ յանձնեալ յատուկ գործն անթերի կըկատարեմք:

(5) Ամենաչնչին գործը զոր կըգործեմք առաջի Աստուծոյ, եթէ մեզ յԱստուծոյ յատկացեալ գործ լինի այդ, նոյնքան արժէք ունի յաչս Ստեղծողին որքան մեծագոյն և կարեւորագոյն գործեր:

5. Ս. Յովհաննու պաշտօնը գրեթէ լրացաւ երբ Տէրն մեր զկնի մկրտութեան 'ի Յորդանան գետ սկսաւ իւր փրկական տնօրէնութիւններ. բայց Յովհաննէս տակաւին շարունակեց իւր ապաշխարութեան քարոզութիւն, որով ոչ սակաւք յետոյ յարեցան և աշակերտեցան Յիսուսի փրիստոսի: Ս. Յովհաննէս մեռաւ յանկարծական սրոյ մահուամբ՝ մի շար կնոջ թելադրութեամբ: Մատթ. Ժ: 1-12:

6. Մեր Եկեղեցին տարին չորս անգամ կըկատարէ Ս. Յովհաննու Մկրտչի տօնն 'ի յիշատակ (ա) ծննդեան (բ) գլխաման, (գ) փոխադրութեան նշխարացն 'ի Հայաստան և (դ) գիւտի մասանցն 'ի Ս. Երուսաղէմ: — Իբրև Հին Ուխտի վերջին և Նոր Ուխտի առաջին մարգարէ՝ մեր Եկեղեցին նորա անունը հանապազ կըյիշէ այլ և այլ աղօթից և երգոց մէջ:

ԽՐԱՏԱԿԱՆ. (1) Ս. Յովհաննու Նախանձախնդրութիւն և արիութիւն մեզ ուսուցանելու է նախանձախնդրութեամբ և արիութեամբ կատարել անթերի ինչ որ մեր պարտքն ու պաշտօնն է:

(2) Տեսուն մերոյ Յիսուսի փրիստոսի երկրորդ գալստեան անձկանօք սպասել և ակնուներլ, և պատրաստել նորա ճանապարհն որպէս Յովհաննէս Մկրտիչ կըպատրաստէր նորա առաջին գալստեան ճանապարհն:

(3) Անսալ Եկեղեցոյ հրահանգաց, մասնաւորապէս յաւուրս Մեծի պահոց, երբ ժողովուրդը կըկոչուի յապաշխարութիւն 'ի քառութիւն և 'ի թողութիւն մեղաց:

ԲԱՆՔ ԽՐԱՏԱԿԱՆՔ ՄԱՐԿՈՍԻ ԱԻՐԵԼԻՈՍԻ

ՀԱՒԱՔԵԱՅ ԱՐԺ • ՏԵՐ ԱԻԵՏԻՍ Գ • ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ :

(Շարունակութիւն, տես էջ 64.)

Ինչպէս որ ազգերն իրարմէ կը տարբերին, այնպէս ալ մարդոց բաղձանքը. մէկուն սիրածը մէկալը կ'ատէ, ա'յն բանին՝ որ մէկն ետեւէն կը վազէ, մէկալն անկէ կը փախչի :

Ինչպէս որ շան հաջիւր պէտք չէ արգելուլ հովիւը հանգիստ քնանալու համար, այսպէս ալ պէտք չէ արգելուլ ճշմարտախօսութիւնը, ծերերուն զժուարը գալուն համար :

Խոհեմ մարդը պէտք է անցածին վրայ մտածէ, ներկայն կարգի դնէ, ու ապագայն հեռատեսէ :

Բանի մը խիստ ետեւէ իյնալն ալ, խիստ անհոգ ըլլալն ալ՝ յաջողութեան արգելք կ'ըլլան :

Խոհեմ մարդը աւելի պէտք է լսէ, քան թէ խօսի :

Չկայ խոհեմ մարդ մը, որուն խոհեմութիւնը թերի չըլլայ. եւ ոչ անանկ իմաստուն մարդ մը, որուն իմաստութեանը չյաղթէ տգիտութիւն :

ՆԱԽԱՆՁ .

Ով որ ուրիշներուն առաջնորդելը վրան կ'առնէ, իր հոգը կ'աւելցնէ, եւ ուրիշներու նախանձը կը շարժէ :

Գէշ խօսքը գէշ սրտի նշանն է :

Մէկուն յաջողութիւնը շատերուն վերայ սաստիկ նախանձ կը բերէ :

Մարդ մը որչափ համբաւ ստանայ օտարներուն մէջ, այնչափ հալածանքներ կը կրէ իրեններուն նախանձովը :

Նախանձն այնպիսի թունաւոր իժ մի է, որ անձ մը ազատուած չկրնար ըլլալ անոր խածատող ատամներէն, պատառող ու թունաւոր լեզուէն :

ԿԻՆ .

Այնչափ կարեւոր է կրներուն տունը կենալն ու համեստ ըլլալը, որչափ զօրավարներուն դուրս ելնելը. ասոնք դուրս ելնելով աշխարհքը կը պահեն, անոնք տունը կենալով կը պահեն իրենց պատիւն ու տունը :

Չկայ ստեղծուած մը՝ որ կ'նոջ չափ փափաքի պատիւ ստանալու համար. ու չկայ ալ անոր պէս, որ ստանալուն

կերպը չգիտնայ :

Չկայ այնպիսի գաղանաբարոյ ու վտանգարեր կի՛ն քան զա՛յն կի՛նը, որուն այրը չգիտնայ հետը կենակցիլ իբր մարդ :

Կի՛նը ոչ այնքան ճնշելու է, որ իբրեւ ստրուկ աղախին համարուի, ոչ ալ այնքան անզուսպ թող տալու է, որ խրոխտալով հրամայէ իբրեւ բռնաւոր տիրուհի :

Անպատեհ է իմաստուն մարդոց, եթէ ամեն անգամ իրենց կի՛ները ցաւցնեն կծու եւ դառն խօսքերով . վասն զի իմաստնոց մէջ ա՛յն խօսքերը լաւ համարուած են, որք յարմար ժամանակին կրնան օգտաւէտ եւ ազդու ըլլալ կնոջ ուղղութեանը համար :

Լի՛րբ է ա՛յն կի՛նը, որ կ'ընդդիմանայ իր էրկան կամ քի՛ն, եւ խելագա՛ր է ա՛յն այրը, որ իր կնոջ հետ հրապարակաւ կը վիճաբանէ . քանզի թէ որ կի՛նը բարի է, այրը խնամք պէտք է տանիլ անոր, որպէս զի աւելի բարի ըլլայ, եւ եթէ չար է, համբերել պէտք է, որպէս զի աւելի չարագոյն չըլլալ :

Գիտուն այրը պէտք է ամուսնանալէ յառաջ լաւ մտածել ինչ որ ամուսնութեան համար պիտի ընէ . եւ ամուսնանալէ վերջ իր սիրտը պէտք է լայնացնել, ու համբերող գտնուիլ իր վրայ գալիք վիշտերուն, զորս պիտի կրէ, թէ որ կի՛նը չար ըլլայ :

Ոոհեմ այրն այս կարգը պահելու է . այսինքն՝ շատ անգամ սպառնալու է, քիչ անգամ յանդիմանելու առանց ծեծ անոր տալու . ապա թէ ոչ՝ վերցուած պիտի լինի երկուքին մէջէն հաւատարմութիւնը, սէրը եւ խաղաղութիւնը, եւ զաւակաց վերայ ալ անկրթութիւն ու անխընամակալութիւնը պիտի տեղի ունենան :

Անամօթ ու անհամեստ կի՛նը միշտ իր գործքով կը խայտառակուի :

Կանանց առանձնակեցութիւնը՝ սանձ կըլլայ բամբասող լեզուները կարկեցնելու, եւ կղպանք՝ զանոնք գոցելու համար . բայց ա՛յն կի՛նը՝ որ առանձին չկենար, իր պատիւը վտանգի մէջ կը դնէ :

Հրատարակուած վաւաչոտ կի՛նը՝ գաղանաբարոյ կենդանի՝ ու վտանգաւոր թշնամի մընէ հասարակութեան համար :

Աղջիկ մը բարի ըլլալու համար՝ կը պարտաւորի հնազանդ ըլլալ իր մօրը, ու մայրն ալ բարի ըլլալու համար՝ պէտք է գիտնալ լաւ կրթութիւն տալ իր աղջկան :

Մայր մը թէ որ առաքինի ըլլայ, ու ամօթխած աղջիկ ունենայ, այլ եւս աղջկան խրատ տալը աւելորդ կ'ըլլայ:

Չգիտեմ, թէ այս ի՛նչ գատողութիւն է. որ դրամ գողցող մարդիկը կը սպաննեն, ու սիրտ գողցող կիները զանց կ'ընեն:

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ.

Լաւ մարդոց բարի նշանը՝ պարագ չկենալն է: Ով որ իր ժամանակը օգտակար զբաղմունքով չ'անցըներ, անարժան է կենաց:

Ամենէն երջանիկ երկիրն ա՛յն է, ուր որ ամենքը իրենց աշխատանքը կը վայելեն, ու մէկը ուրիշի քրտինքով չապրիր:


Մարդս չուրախանար ներկայ յաջողութեան վերայ՝ առանց յիշելու անցած ճախորդութիւնները:

Մարդս ի բնութենէ կը բազմայ վեր ելլել՝ քան թէ վար իջնալ. ժողովել՝ քան թէ ցրուել. հրամայել՝ քան թէ հնազանդիլ. թէ որ այս ասանկ է, ինչու՞ մոլութիւններով նուաստացնենք զմեզ քան զանասունները, քանի որ կրնանք առաքինութիւններով մարդոցմէ վեր ըլլալ:

Ձեռքը երբոր օգտակար գործով զբաղի, միտքն ալ ունայն մտածմունքներու չերթար:

Մէկ աշխատանքէ փախչելու համար՝ անթիւ աշխատանքներ կը ծանրանան մարդու վերայ:





MEM